## ՀԵՌԱԳԻՐԱԼՈՒՐՔ

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

### ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՀՌՈՄ, 3 ապրիլ. — Երեսփոխան Պ. Պարծիլայ Երեսփ. Ժողովոյն մէջ հարցապնդում մ'ուղղեց Աւստրիոյ-Հունգարիոյ կառավարութեան՝ օտարազգիներ արտաքսելու օրէնքը գործադրելու եղանակին վրայ։

—Ուաշինկթընի իտալական գործակատարն հրաման ընդունեց նախարար Պ. Գլէնի յանձնել հետեւեալ պատասխանն. Իտալիա ուրիշ բան չէ պահանջած բայց եթէ օրինաւոր դատաստանի մը բացումն. Իտալիա կը կրկնէ նոյն պահանջը։ Խնդիրն այն ատեն միայն պիտի փակի երբ դաշնակցական կառավարութիւնը վերջնապէս յայտարարէ թէ դատաստանն ընդհուպ պիտի սկսի։ Առ այժմ Իտալիա ի նկատ կ'առնու Միացեալ Նահանգաց կառավարութեան յայտարարութիւնը թէ պարտականութիւն ունի դրամական հատուցում ընել զոհերուն ընտանեաց։

Վիեննա, 3. — Գերման աշխարհագիտաց համաժողովն որ գումարեցաւ ի Վիեննա, երէկ գցաղեցաւ պալքանեան թերակղզւոյն աշխարհագրական ծանօթութեանց այժմեան վիճակին քննու...

| | |
|---|---|
| Օսմ. Մաքս. արժէթուղթ | — — |
| Գանք Օթոման | 611 25 |
| Ռիօ Թէնթօ | 598 75 |
| Սօսիէթէ ժէնէրալ | 124 50 |

## ՄԻՍԱՔԵԱՆ

### Ա.

### ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐ

Ինչ որ ալ գրել ջանանք ուսումնական կեանքէ մը, իր գրական, առանձնական և հանրական կեանքէ, կուրի մը կամ ի մթան խարխափումները պիտի համփոփէն և ոչ աւելի ինչ։ Քիչ չատ գրող մարդու մը կեանքն իբրեւ ի պատկերի նկարելու համար՝ պէտք է կենակցած ըլլալ անոր, իր ժամանակը լաւ գիտցած ըլլալ, — գրողները, գործողները, հասարակաց կրթարանները, ընդհանուր ձգտումը ընկերութեան մէջ։ Շատ բան, որ ինքն իրեն մէջ նկատուելով ոչինչ է, համեմատութեամբ կրնայ ըլլալ մեծ ինչ...

Պէտք է ըսել որ կենսագրական գրականութիւնը չունինք մեք. ծննդեան թուականները, մահուան օրերը, ճամբորդութեան ժամանակ, ասոնք բաւական չեն. Հասարակային կեանքերը պէտք է ճանչցած ըլլանք իրենց...

...ղրկեն. խոկ ևժէ իր ժիշատակարանը կանգնենք. — ինչ որ դժուարին չէ, — քարը կը լուանք Ալեմտաղի ջրով և անոր ծաղիկներովն ու ծառերուն ոստերովն հիւսուած պսակ մըն ալ կը դնենք իր սրտին վրայ, ի փոխանս իր ստուերներուն, որ սուրբ են իր սաներուն՝ իր յիշատակին հետ։

ՀՐԱՆԴ

## ԿՆՃՌՈՏ ԽՆԴԻՐՆ

ՍԱՌՆԱՄԱՆԱՑ ՇՈՒՐՋԸ կը դեգերիմք այսպէս ընդերկար, ոչ միայն քանզի նորութեան անդիմադրելի հրապոյրն ունին նոցա երեւոյթներն, այլ քանզի նաեւ կը յարուցանեն բազմաթիւ յոյժ շահագրգիռ գիտական խնդիրներ։

Երկայն ու անյագուրդ հայեացքներ ձըգած եմք արդէն իւրեանց մօտաւոր ու հեռաւոր կերպարանաց վրայ։ Դիտած եմք նոցա անհաւասար մակերեւոյթն, որոյ վրայ կը սողան անհամար առուակներ։ Դիտած եմք փայլփլուն բուրգերն, մթին անդնդախոր խոռոչներն, խորունկ ազմկալից ազօրիքներն, ցիրուցան քարակոյտքըն, հսկայական սեղաններն։ Այժմ Պօ...

...րոց։ Այլ եւ այլ ձեւով երկու փայտեայ ամաններու կամ կաղապարաց միջեւ դրուած սառի կտորներ, զօրս ապա ճնշման ենթարկեց։ Այդ ճնշման տակ սառն փշրեցաւ անշուշտ, բայց փշրանքն անմիջապէս կը սառին դարձեալ, կը միանան և կը կազմեն միակտոր մարմին մը, որ ճիշդ գործածուած ամանին ձեւն առած է մածան մարմնոյ մը նման։ Այս միջոցաւ կրնայ ըսուիլ թէ սառը կը ձուլուի այլ և այլ կաղապարաց մէջ և կ'առնէ այլ եւ այլ ձեւեր, գաւաթ, անդրիք, մանեակ, եւ այլն։

ԱԲՐԱՀԱՄ Տ. ՅԱԿՈԲԵԱՆ
(Շաբանաբէնէ.)


## Ա Զ Դ

### ԵՒՐՈՊԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Ա. ՊՈՂՊԷՌՃԵԱՆ

Պապը Ալէ Ճատտէսի Թիւ 12, Կ. Պոլիս

Եւրոպական Գրատունս պատիւ ունի հազորդել իւր բազմաթիւ յաճախորդաց ի Պոլիս և ի գաւառս, թէ հետեւեալ պարբերական հանդէսներն և թերթերը կը վաճառուին խիստ դիւրամատչելի գներով [կանխիկ դրամ]։

Revue Encyclopédique, 48 երես, մեծադիր և բազմապատկեր, հանդէս հնդեւտասնօրեայ գրական, գիտական, արհեստական, գեղարուեստի ամէն ճիւղերու, պատմական և քննադատական, գին 5 ղրշ. գաւառաց համար փոստայի ծախքով 6 ղրուշ։

La Nature, 46 երես, բազմապատկեր, շաբաթական հանդէս գիտական և արհեստական, գին 3 ղրշ. փոս. ծախքով 3,50։

Revue Universelle des Inventions Nouvelles, 32 երես, բազմապատկեր, ամսական հանդէս ամէն երեւելի գիւտերու. գին 4 ղրշ. փոս. ծախքով 5 ղրուշ։

Paris Mode, 28 երես, գունաւոր և անգոյն պատկերօք, մեծադիր հանդէս հնգեւտասնօրեայ ամենէն վերջին նորաձեւութեանց, կանանց համար, գին ղրշ. փոս. ծախքով 6 ղրուշ։

La Petite Revue, 18 երես, բազմապատկեր հանդէս շաբաթական, վիպական, գրական և այլն գին 30 փարայ փոս. ծախքով 1 ղրուշ։

Le Tour du Monde, 16 երես, մեծադիր և բազմապատկեր, շաբաթաթերթ աշխարհագրական, ստորագրութիւն երեւելի ուղեւորութեանց. գին 3 ղրշ. փոս. ծախքով 3.50։

La Science Illustrée, 16 երես, բազմապատկեր, շաբաթաթերթ գիտական ամէն ճիւղերու և գիտական վէպերու. գին 1.50 փոս. ծախքով ղրուշ։

Le Journal des Voyages, 16 երես, մեծադիր և բազմապատկեր, շաբաթական խերթ աշխարհագրական, ծովու և ցամաքի արկածից, ուղեւորութեանց, և այլն. գին 1 ղրշ. փոս. ծախքով 1 50։

Monde de la Jeunesse, 16 երես, մեծադիր և բազմապատկեր, շաբաթական թերթ պատանեկան. գին 30 փարայ փոս. ծախքով 1 ղրշ։

La Joie de la Maison, 16 երես, մեծադիր և բազմապատկեր, շաբաթական թերթ պատանեկան. գին 20 փարայ փոս. ծախքով 1 ղրուշ։

Petit Français Illustré, 12 երես. բազմապատկեր, շաբաթաթերթ մանկական. գին 30 փարայ փոս. ծախքով 1 ղրշ։

Ecolier Illustré, 16 երես, բազմապատկեր շաբաթաթերթ մանկական. գին 15 փարայ փոս. ծախքով 25 փարայ։

Գրատանս մէջ կը գտնուի ֆրանսերէն լեզուաւ, գրական, գիտական, աշխարհագրական, վիպական, թատերական ամէն ճիւղերու վերաբերեալ գրքերու և ամէն տեսակ գասագրքերու մեծ մթերք մը։

Գները խիստ չափաւոր են. 1—5

## ՏՕՔԹԷՕՐ
## Յ. ԷԼՄԱՍԵԱՆ

վկայեալ Փարիզու բժշկ. համալսարանէն

ՄԱՍՆԱԳԷՏ ՎԻՐԱԲՈՅԺ ԵՒ ՄԱՆԿԱԲԱՐՁ

Ի Բէյ-Մէճ Ջուկոյ Թիւ 247

Ցաքմաք Պէչիլանէսի հէջ

Իրեն դիմող հիւանդները կ'ընդունի իւր բնակարանին մէջ ամեն օր կէս օրէն մինչ ի ժամ 3, (Ը. Ե.)։ Ուրբաթ օրերը ձրիաբար կը դարմանուին աղքատ հիւանդները։

Նոյնպէս երկուշաբթի օրերը կը գտնուի առաւօտեան ժամը 10 էն մինչ ցերեկ (Ը. Ե.) ի Պոլիս Եէնի Ճամի Թիւ 12 Վարդանեան դեղարանն ուր ձրիապէս կը դարմանէ աղքատ հիւանդները։

24 14—30

## ԱԶԴ

### ՄՕՍ ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ափէնիօ շոգենաւը, նաւապետ Քրուք, դէպի 31 մարտ, Լիվրբուլէն սատ կ'սպասուի ընդհանուր վաճառքով։

